ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՌԱՆՉՊԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի
Հանրապետության Արարատի
մարզի Ռանչպար համայնք,
Ռանչպար ,

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՌԱՉՄԻԿ ԹԵՎՈՆՅԱՆԻՆ

N 160
17 դեկտեմբեր 2020թ.

Կից ներկայացվում է Արարատի մարզի Ռանչպար համայնքի
ավագանու թիվ 26, 27, 28, 29, 30, 31 որոշումների կրկնօրինակները:

Առդիր 10թերթից;

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Invalid signature

X

Արմեն Պողոսյան

Կատարող խատուկազմի ղեկավար՝ Հ. Դավիդյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՌԱՆՉՊԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ.ՌԱՆՉՊԱՐ
ranchpar.ararat@mta.gov.am
ՀԵՌ. 093187690

09.12.2020թ.

ՈՐՈՇՈՒՄ N 26

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՌԱՆՉՊԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 8 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով.
Արարատի մարզի Ռանչպար համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Ռանչպար համայնքի ավագանու թիվ 8 նիստի օրակարգը:

1. Ռանչպար համայնքին պատկանող օբյեկտների, գյուղապետարանի, մանկապարտեզի և գրադարանի 2020թվականի գույքագրման արդյունքների հաստատման մասին:
2. Ռանչպար համայնքում 2021 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակների դրույքաչափերի սահմանման մասին:
3. Ռանչպար համայնքի 2020 թվականի վարչական բյուջեում փոփոխություն կատարելու մասին:
4. Արցախյան պատերազմում զոհված, վիրավորված զինծառայողների ընտանիքներին սոցիալական աջակցության առավելագույն չափը սահմանելու մասին:
5. Ռանչպար գյուղական հմայնքի ղեկավարի,համայնքապետարանի աշխատակազմի, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը սահմանելու մասին:

Կողմ՝ Ի.Պետրոսյան

Կողմ՝ Ա.Թամոյան

Կողմ՝ Լ.Կոլիյան

Ռանչպար համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝ Ա.Պողոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՌԱՆՉՊԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. ՌԱՆՉՊԱՐ
ranchpar.ararat@mta.gov.am
ՀԵՌ. 093187690

09.12.2020թ.

ՈՐՈՇՈՒՄ N 27

ՌԱՆՉՊԱՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ,ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն կանոնադրության և համայնքապետի 2020թ. օգոստոսի 14 թիվ 13 կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի.
Արարատի մարզի Ռանչպար համայնքի ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Ռանչպար համայնքին պատկանող օբյեկտների 2020 թվականի դեկտեմբերին իրականացված գույքագրումը:

Կողմ՝ Ի.Պետրոսյան

Կողմ՝ Ա.Թամոյան

Կողմ՝ Լ.Կոլիյան

Ռանչպար համայնքի ղեկավարի պաշտոնակատար *Ա.Պողոսյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՌԱՆՉՊԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Գ. ՌԱՆՉՊԱՐ

Ranchpar.ararat@mta.gov.am

ՀԵՌ. 093187690

09. 12.2020թ. ՈՐՈՇՈՒՄ N 28

ՌԱՆՉՊԱՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2021ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ, 10-րդ, 11-րդ,12-րդ,13-րդ, 14-րդ հոդվածների և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի պահանջներով.
Արարատի մարզի Ռանչպար համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Սահմանել Ռանչպար համայնքի 2021թ. համար հետևյալ տեղական տուրքերի տեսակները և դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան Ռանչպար համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի)թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

ա. հիմնական շենքերի և շինությունների համար
մինչև 300 քմ. ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար 5000 դրամ:
բ. սույն կետի 1-ին ենթակետի <<ա>> պարբերությունով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝
- 200-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար 10000 դրամ
- 500-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար 15000 դրամ
- 1000-ից մինչև 3000քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար 20000 դրամ
- 3000-ից և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար 30000 դրամ
գ. ոչ հիմանական շինությունների տեղադրման համար՝
- մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար 1000 դրամ
- 20 քմ և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար 2500 դրամ
2) Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների, վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության՝ 1500 դրամ

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման , ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների , վերակառույցների , շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա)հետևանքով օբյեկտի ընդհանուր մակաերեսի ավելացում կամ շենքի գործառնական նշանակության փոփոխություն, և , բացի սույն կետի 1-ին ենթակետի <<ա>> պարբերությունով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար տեղական տուրք սահմանել 2500 դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 150000 դրամ

5) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում, բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կողեզրում՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 50000դրամ

6) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 30000դրամ

7) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 10000դրամ.

8) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 25000 դրամ.

9) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկահոլային խմիչքների կամ օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխադրիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկահոլային խմիչքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 6000 դրամ

-26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 8000 դրամ

- 50-ից մինչև 100 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 15000 դրամ

- 100-ից մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 20000 դրամ

- 200-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 40000 դրամ

- 500-ից և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 70000 դրամ

բ .ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար

- մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 6000 դրամ
- 26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 8000 դրամ
- 50-ից մինչև 100 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 15000 դրամ
- 100-ից մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 20000 դրամ
- 200-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 40000 դրամ
- 500-ից և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 70000 դրամ

10) համայնքի վարչական տարածքում բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

11) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ 25000 դրամ,
բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000 դրամ,
գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 250000 դրամ,
դ. խաղատների համար՝ 500000 դրամ,
ե. շահումով խաղերի համար՝ 250000 հազար դրամ,
զ. վիճակախաղերի համար՝ 75000 դրամ.

12) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 3000 դրամ
- 26-ից մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող հանարային սննդի օբյեկտի համար 6000 դրամ
- 50-ից մինչև 100 քմ ընդհանուր մակերես ունեցող հանարային սննդի օբյեկտի համար 8000 դրամ
- 100-ից մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հանարային սննդի օբյեկտի համար 10000 դրամ
- 200-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող հանարային սննդի օբյեկտի համար 15000դրամ
- 500-ից և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող հանարային սննդի օբյեկտի համար 25000դրամ

բ. ոչ հիմանական շինությունների ներսում՝

- մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 1000 դրամ
- 26-ից մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող հանարային սննդի օբյեկտի համար 1500դրամ
- 50-ից մինչև 100 քմ ընդհանուր մակերես ունեցող հանարային սննդի օբյեկտի համար 2000 դրամ
- 100-ից մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հանարային սննդի օբյեկտի համար 4000 դրամ
- 200-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող հանարային սննդի օբյեկտի համար 10000դրամ
- 500-ից և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող հանարային սննդի օբյեկտի համար 18000 դրամ.

13) համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ 750 դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

14) Ռանչպար համայնքի խորհրդանիշը (անվանումը), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 50000 դրամ.

15) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 5000 դրամ.

16) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 250000 դրամ.

17) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 1250000 դրամ,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2500000 դրամ,

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 3500000 դրամ,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5000000 դրամ.

18) համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար 100000 դրամ.

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

1.Ռանչպար համայնքում սահմանել տեղական վճարների տեսակների հետևյալ դրույքաչափերը.

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 3000դրամ

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված՝ շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 5000դրամ

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայքնի մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 3000դրամ

4) համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար. համայքնի մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 2500դրամ

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար մասնակցության վճար սահմանել 3000դրամ

6) Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 2000 դրամ

7) Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար աղբահանության վճարը սահմանել

ա. կենցաղային աղբի համար՝ յուրաքանչյուր բնակչի համար՝ 100 դրամ

բ. ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 3000 դրամ

ըստ զանգվածի՝ մեկ տեննա աղբի համար՝ 10000դրամ

գ. Իրավաբանական անձանց համար սահմանել հետևյալ սակագները. Առևտրի /այդ թվում շուկաների/, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ՝ 1 քմ-ի համար 20 դրամ,

արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինություններ՝ 1 քմ-ի համար 5 դրամ,

կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական շինություններ՝ 1 քմ-ի համար 2 դրամ

հյուրանոցների և հյուրանոցային ծառայություններ իրականացնող այլ հասարակական շինությունների մասով՝ 1 քմ -10 դրամ

վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ 1քմ համար 20 դրամ

դ. Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդ օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի մասով՝ 1քմ համար 50 դրամ:

8) Սահմանել համայնքի տարածքում անասնաբույժի կողմից մատուցվող վճարովի անասնաբուժական ծառայությունների ցանկը և գնացուցակը.
ա. Կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվություն 500 դրամ
բ. Ծննդօգնություն
Թեթև միջանտություն 1000դրամ
Ծանր միջամտություն 5000դրամ
գ. Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում՝ կախված կենդանու տեսակից/ բացառությամբ՝ <<Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում>> պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների/
- մա կենդանի 200 դրամ
- խոշոր կենդանի 300 դրամ
դ. Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ դեմ պայքար – 500դրամ
ե. Աղտահանություն- 1քմ 100դրամ
զ. Միջատազերծում /դիզինֆեկցիա/ 1քմ 100դրամ
է. Կրծողների ոչնչացում /դեռատիզացիա/- 1քմ 100դրամ
ը. Արհեստական սերմնավորում- 5000դրամ
թ. կենդանու հերձում
մանր կենդանի 1000դրամ
խոշոր կենդանի 3000դրամ
ժ. Կենդանու բուժում՝ յուրաքանչյուր այցելությունը 1000դրամ
ի. Կենդանիների նախասպանդային զննում՝
մանր կենդանի -500դրամ
խոշոր կենդանի -1000դրամ
Սույն որոշման առաջին կետի համար կիրառվել են 0,5 գործակիցը:

Կողմ՝ Ի.Պետրոսյան
Կողմ՝ Ա.Թամոյան
Կողմ՝ Լ.Կոլիյան

Ռանչպար համայնքի ղեկավարի պաշտոնակատար Ա.Պողոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՌԱՆՉՊԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Գ. ՌԱՆՉՊԱՐ
ranchpar.ararat@mta.gov.am
ՀԵՌ. 093284863

09.12.2020թ.

ՈՐՈՇՈՒՄ N 29

ՌԱՆՉՊԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով.
Արարատի մարզի Ռանչպար համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ռանչպար համայնքի 2020 թվականի վարչական բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունը:

Պահուստային ֆոնդից
Բաժին 11, խումբ 1, դաս 2 հոդված 4891-ից պակասեցնել 900,0 հազ. դրամ
Բաժին 8, խումբ 2, դաս 2 հոդված 4269-ից պակասեցնել 200,0 հազ. դրամ ավելացնելով
Բաժին 1, խումբ 1 դաս 1 հոդված 4111 –ին 400,0 հազ.դրամ /աշխատողների աշխատավարձ/
Բաժին 5, խումբ 6, դաս 1 հոդված 4264 –ին 700,0 հազ.դրամ / Սև ջուր գետի մաքրման համար/:

Կողմ՝ Ի.Պետրոսյան

Կողմ՝ Ա.Թամոյան

Կողմ՝ Լ.Կոլիյան

Ռանչպար համայնքի ղեկավարի պաշտոնակատար Ա.Պողոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՌԱՆՉՊԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Գ.Ռանչպար
ranchpar.ararat@mta.gov.am
ՀԵՌ.093187690

09.12.2020թ. ՈՐՈՇՈՒՄ 30

ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԶՈՀՎԱԾ, ՎԻՐԱՎՈՐՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետի պահանջներով .
Արարատի մարզի Ռանչպար համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Արցախյան պատերազմում զոհված, վիրավորված զինծառայողների ընտանիքներին սոցիալական աջակցության առավելագույն չափը սահմանել 200,0հազ.դրամ:

Կողմ՝ Ի.Պետրոսյան
Կողմ՝ Ա.Թամոյան
Կողմ՝ Լ.Կոլիյան

Ռանչպար համայնքի ղեկավարի պաշտոնակատար Ա.Պողոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՌԱՆՉՊԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Գ.Ռանչպար
ranchpar.ararat@mta.gov.am
ՀԵՌ.093187690

09.12.2020թ. ՈՐՈՇՈՒՄ 31

ՌԱՆՉՊԱՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 28-րդ ենթակետի պահանջներով.
Արարատի մարզի Ռանչպար համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Արարատի մազի Ռանչպար համայնքի ղեկավարի, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի:

Կողմ՝ Ի.Պետրոսյան
Կողմ՝ Ա.Թամոյան
Կողմ՝ Լ.Կոլիյան

Ռանչպար համայնքի ղեկավարի պաշտոնակատար Ա.Պողոսյան